



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ և ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ» ՓԱԿ
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 05 » ապրիլի 2022թ. 59-Ձ

ք. Երևան

«ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ» ՓԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՉԱՓՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ «ՕԴԻ
ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԽՈՆԱՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՑՈՂԻ/ԵՂՅԱՄԻ ԿԵՏԻ
ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԻ ՄԻԱՎՈՐԻ ՉԱՓԱՆՄՈՒՇ»-Ը ՈՐՊԵՍ
ԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆՄՈՒՇ ԾԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ ընկերության գիտական խորհրդի նախագահի N340 առ 31.03.2022թ. զեկուցագիրը, զեկուցագրում առկա որոշման նախագիծը, օդի հարաբերական խոնավության և ցողի/եղյամի կետի ջերմաստիճանի չափումների ոլորտի հինգ մասնագետներից կազմված աշխատանքային խմբի չափագիտական բնութագրերին տվյալ չափանմուշի համապատասխանության վերաբերյալ և ազգային չափանմուշ ճանաչելու հնարավորության մասին ներկայացրած եզրակացությունները, ընկերության տնօրենի 2021 թվականի հուլիսի 6-ի «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ ընկերությունում առկա չափման միջոցներից չափանմուշային համալիրներ կազմավորելու և դրանց փաստաթղթերի ձևակերպման և լրամշակման նպատակով աշխատանքային խումբ ստեղծելու մասին» № 88-Ն հրամանով կազմավորված աշխատանքային խմբի չափագիտական բնութագրերին տվյալ չափանմուշի համապատասխանության վերաբերյալ և ազգային չափանմուշ ճանաչելու հնարավորության մասին ներկայացրած եզրակացությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Ճանաչել «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ ընկերությունում գտնվող «Օդի հարաբերական խոնավության և ցողի/եղյամի կետի ջերմաստիճանի միավորի չափանմուշ»-ը որպես «ԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆՄՈՒՇ»:

- 2. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
- 3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

Տնօրեն

ժամանակավոր պաշտոնակատար

ԱԼԲԵՐՏ ԲԱԲԱՅԱՆ